

Խ. Ս. Հ. Մ. ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏ
Ծխախոտի արդյունաբերության համամիուրենական
ինսիգնիս
ՀԱՅՈՒՍԱՆԻ ՓՈՐՁՈԿՈՅԱՆ

ԵԽԱԽՈՏԻ ՄՅԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՅՏՈՒՄ

ՑԿՎ.

ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ
ՈՒ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

(Ծխախոտագործի բրոցյալը № 2)



633.46

22 DEC 2017

**ՇԽԱԽՈՅԻ ՄԵԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՅՏՈՒՄ ՅԵՎ
ՊԱՅԺԱՐԸ ՆՐԱ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՄ**

Մեր յերկրի արդյունաբերության և գյուղատնտեսության բուռն վերելքը և գործազրկության վերացումը մեր առաջ դնում են բանվորական ուժի խիստ հաշվառման, պլանավորման և տառեսաբար ոգտագործման խնդիրը։ Մեր յերկրի շինարարությունը և գյուղատնտեսական արտադրության սոցիալիստական խորը ձևերի աճումը մեղանից պահանջում են ստեղծել հաստատուն մեքենայական բազա։ Արդեն արտադրության այն ամբողջ միջոցները, վորոնք գյուղատնտեսության մեջ գոյություն ունեն, հսկայական արդյունք են տալիս, վորով հնարավոր և գառնում մի շարք մշակույթների ցանքային տարածությունը մի քանի անգամ ընդարձակելու։ Կասկածից վեր և, վոր խորհանտեսությունների և կոլտնտեսությունների մեքենայական բազան ել ավելի ընդարձակելու գեպագում, ծխախոտն ել ավելի արդյունավետ և գառնալու։
Մեքենայացման խնդիրն առանձնապես սուր կերպով և գրված ծխախոտագործության՝ մեր գյուղատնտեսության այդ կարևոր ճյուղում, վորով մինչև այժմ համարյա բայրը պլրոցները կատարվում են ձեռքով։
Ծխախոտի մշտկման գործում միջարձակին մշտ-

1-3386 գր



կության ժամանակ բավականաչափ աշխատանք ե
ծախսվում; այդ պատճառով բանութը վոչ ճիշտ դասու-
վորելուց և սխալ ողտագործելուց կարող ե տեղի ու-
նենալ քաղնանի ուշացումը, իսկ մոլախոտերի զնն
մղվող համառ պայքարը, ծխախոտի բերքատվությունը
զգալի չափով բարձրացնելու կարեղագույն միջոցնե-
րեց մեկն ե: Ծխախոտի շիթիները դաշտ տեղափոխ-
ելուց հետո, սկզբնական շրջանում, քանի զեռ նա լոկ
չե ամրացել, աճը դանդաղ ե տեղի ունենում: Այդ ժա-
մանակ ե, վոր բոլոր տեսակի արտաքին պայմաններին
նա առանձնապես զգացուն ե և հենց այդ ժամանատկ
ե, վոր առանձնատպես պետք ե հետեւ, վորպեսդի մատ-
զաշ բույսերը մոլախոտերին կուլ չդնան, նրանց շրջա-
պատի հողը լինի փիրուն և խոնավ, վորովհետեւ ծխա-
խոտի այդ ժամանակվա թուլացումը նրա հետագա-
ղարդացման և վերջին հաշվով նրա բերքատվություն
վրա առանձնապես խիստ ե անդրադառնում: Հոգը փըս-
րուն վիճակում պահելը կարեռ ե այն տեսակետից,
վոր յերբ հողը ամրացած ու կեղեկակալած ե լինում,
բույսերն ողի պահառությունից խիստ տուժում են:
Այդ իսկ տեսակետից անհրաժեշտ ե ժամանակին կա-
տարել ծխախոտի քաղնանը: Առաջին քաղնանն անհրա-
ժեշտ ե կատարել վոչ ուշ, քան շիթիներուց 10—15
օր հետո:

Սովորաբար տռաջին փխրացման ժամանակ ծխա-
խոտի բուկը չեն լցնում:

Քաղնանի-փիրացման ժամանակ միջ շարքային
տարածություններում պատրաստում են ակոսներ, վո-
րոնց միջոցով հետագայում ծխախոտը ջրվում ե: Առա-
ջին քաղնանից յերկու շաբաթ անց, անհրաժեշտ

յերկրորդ անգամ քաղնանել, այդ ժամանակ ծխախոտը
մեծացած ե լինում, ուստի արդեն անհրաժեշտ ե կա-
նոնավոր կերպով նրա բուկը լցնելը Բուկը լցնելու
նպատակն ե ցողունի ստորին մասը խոնավ հողի մեջ
դնելը վորպեսդի նա կողարմատներ տա, ուժեղանա և
նրա արմատային սխատեմն ամբանա և զբանով բույսը
հետադայում կարողանա լավ զարգանալ:

Ժամ զեղքերում ծխախոտի միջարքային մշա-
կությունը յերկրորդ քաղնանով ավարտվում ե: Յեր-
բեմն մոլախոտերով աղբոտված հողերում, ինչպես և ան-
բարենպաստ անձրեային յեղանակներին կարող ե
կարիք զգացվել նաև յերբորդ քաղնանը կատարելու:
Այսպիսի ծանր աշխատանքը, ինչպիսին ե քաղնանը,
տնտեսությունից բավականաչափ բանուժ ե խում:
Ուստի անհրաժեշտ ե դառնում քաղնանի աշխա-
տանքները մեխանիզացիայի յենթարկելու: Քաղնանը
ծխախոտի մշակման գործում այն պրոցեսներից մեկն
ե, վորն ամենից հեշտ ե մեքենայացման յենթարկել
ձիւտ ե, ծխախոտի միջարքային մշակությունը մեքե-
նայով (մանավանդ առաջինը) վորոշ չափով բարդա-
նում ե նրանով, վոր բույսը շիթիներուց հետո դեռ շատ
փոքր և քնքուշ ե լինում:

Այսոււամնայնիվ ծխախոտի մշակման այդ մոմեն-
տըն այնքան ել անհաղթահարելի չե, վոր հնարավոր չլինի
ձիւտ կուլտիվատոր գործադրել: Անգամ սովորական
պլաննետներով, վերջիններիս ճիշտ սարքված լինելու,
հոգասար և կանոնավոր գործադրմամբ միանգամայն
հնարավոր ե անցկացնել առաջին և յերկրորդ քաղնանը
ձիւտ ուժութիւն: Միանգամայն հասկանալի յե, վոր ծխա-
խոտի միջարքային տարածությունները հատուկ մե-

քենաներով մշակելիս աղելի լավ արդյունք կտտացվի,
և քաղհանն ավելի լավ հետևանք կունենա:

Հաճախ միջարքային տարածությունների մշակ-
մոն համար գործադրում են ձիան կուլտիվատոր:

Կուլտիվատորի 10 ժամվա արտադրողականու-
թյունը հավասար է 1,5—2 հեկտարի: Քաղհանիչները
սովորաբար պահանջում են ձեռքի լրացուցիչ աշխա-
տանք, մանավանդ՝ 1-ին քաղհանի ժամանակի, այ-
սինքն, այն բույսերը, վորոնք ծածկվել են հողով, պեսք
և հողից ազատել ե բույսերի արմատավիկի շուրջը յե-
ղած հողը փխրացնել Յերկրորդ քաղհանի ժամանակ
նույնպես անհրաժեշտություն և դդացվում ձեռքով
լրացուցիչ աշխատանք կատարել: Խորհանտեսություն
և կոլտնտեսության յուրաքանչյուր բանվոր պետք է
քաղհանի աշխատանքների վորակի հիմնական պահանջ-
ները լավ յուրացնի:

Այստեղ ամենակարեռն այն է, վոր պլանետ մե-
քենան կամ մի այլ քաղհանիչ մշտական 4—5 սանտի-
մետը խորությամբ դնա և շարքերում բույսերի մեջ
մանի, իսկ բոլոր մոլախոտերը կտրատվեն: Մեքենա-
ներով աշխատելու ժամանակ անհրաժեշտ է հմտորեն
հետեւել, վոր բաց տեղեր չմնան և բույսերը հողով
չծածկվեն, մանավանդ տերեները չմնանվեն:

Ծխախոտի քաղհանի գործիքներից միջարքային
տարածություններում լավագույն արդյունք և ավել
ձիու և 8 պլանետը:

Զոկուք և յերեք մոլախոտերի դեմ
ժամանակին և յեռանդուն կերպով պայքարելը ծխա-
խոտի բերքատվության բարձրացման ամենահիմնական
գրավականն եւ:

Քաղհանի ընթացքում կատարվում է նաև ծխա-
խոտի ջրելու աշխատանքը, սակայն այդ միջոցառում-
ների մասին կհրատարակվի հատուկ թերթիկ: Ծխա-
խոտի տերեները լավ են համարվում այն գեղքում,
յերբ նրանք վորոշ սարթություն, արոժատ և այլ
անհրաժեշտ հատկություններ ունեն Ծխախոտի տե-
րեկի վորակը բարձրացնելու համար պետք է նրա բույ-
սերի ծաղկավնջերը կտրատել և կատարել բճատում,
այսինքն կողերի ավելացրդ ճյուղերը—բճերը հեռացնել:
Ցիթե ծխախոտի ծաղկավնջերը չհեռացվին, այդ դեպ-
քում բույսի բոլոր նննդանյութերը տերեներից կանց-
նեն ծաղկիներին և սերմերին, վորից և կատացվեն
թերթե ու գատարկ տերեներ: Այստեղից ել հասկանալի
յի, վոր ծաղկատելը վորքան շուտ կատարվի, այնքան
շատ նյութեր կմնան տերեներում, այնքան խոշոր և
ամուր տերեներ կստացվին և ընդհակառակը ուշ ծաղ-
կատելու գեղքում, տերեները վորը կմնան:

Աննդանյութերով տղքատ հողերում, վորտեղ բույ-
սերը թույլ են զարգանում, ծաղկավնջերը պետք է
կտրել վաղ և ավելի խոր՝ մինչև 2—3 տերթ: Ընդհա-
կառակը, հարուստ և սննդառատ հողերում, վորակով
բարձր ծխախոտ ստանալու համար ծաղկատումը պետք
է կատարել ուշ և վոչ խոր: Վերջին դեպքում չպետք
է ծաղկիների հետ միասին ծայրի տերեները կտրատեն
կամ մեկ տերեկից ավելի չպետք է կտրել: Ծաղկատե-
լիս հարկավոր է հաշվի առնել նաև յեղանակի պայ-
մանները:

Որինակ, յեթե ցանկանում են բերքահավաքն
արագացնել հիվանդություններից, ցրտահարություն-
ներից և այլ պատճառներից դրվագ, այդ դեպքում

ծաղկատումը պետք ե կատարել ավելի շուտ և խորը, վորից և տերենների տեխնիկական հասունացումն արագանում եւ Բճատումը նույն նպատակն ունի, ինչ վոր ծաղկատումը, այսինքն առաջացնել ավելի բարձր վորակի տերեւ, սոկայն վոչ թե ծաղկիները կտրատերով, այլ բճատերով։ Այդ ինկ տեսակետից, ծաղկատման կանոնները միանգանայն ընդունելի յեն նաև բճատման աշխատանքների ժամանակ, այսինքն՝ ավելի հարուստ հողերում կարելի յե կատարել ավելի ուշ և այլն։ Մեր պայմաններում, յերբ ծխախոտը մշակվում ե ավելի հարուստ և ջրովի հողերում, բճերն աճում են բավականաչափ արագ, մասնավանդ ծաղկակալած բույսերում, վորպիսի պըրոցեն ավելի ուժեղ ե կատարվում, այդ պատճառով չի կարելի սահմանափակվել մոկ անգամ բճատում կատարելով, այդպիսին պետք ե կրկնել յերկու անգամ։ Ամրող վեգետացիոն ժամանակաշրջացում յերենին անհրաժեշտ ե լինում կատարել վոչ պահան քան 2 բճատում, իսկ հաճախ և ավելի Շաղկատումը և բճատումը սովորաբար կատարում են ձհռովի, բայց յերբ այդ աշխատանքներն աչքաթող են արվում, այսինքն ժամանակին ծաղկատում և բճատում չեն կատարվում, նպատակահարմար ե գործադրել արգելութական մկրտաներ, սեկատորներ, վորոնցով աշխատանքն ավելի արագ և վորակով ե կատարվում։

Ծխախոտի բույսն ինչպես ջերմոցներում, այնպիս ել դաշտում ունի շատ թշնամիներ, վորոնցից և հաճախ մեր տնակնությունները կորցնում են իրենց բերքի խոշոր մասը։ Այդ պատճառով պետք ե աշխատանքները կազմակերպել այնպես, վոր ամրող բիրքը դաշտից հավաքվի առանց կորուստների և լիսատունների

կողմից փչացվելու։ Մեր ծխախոտի պլանացիաներում խոշոր լիսատուններից են ծխախոտի լինճը և ծխախոտի տրիպուր։ Բացի այդ, վտանգավոր են աև ծխախոտի պարագիտ «զարագիխան» (ծխախոտի ճրագախոտը)։

Ծխախոտի լինճը, վորը կոչվում ե նաև, այսպես ասած, բուսական կամ ծխախորտի վոջիր առաջանում ե դաշտում ծխախոտի բույսի վրա և բազմանում ե ամբողջ խմբերով, վորոնք շատ են լինում մանավանդ այն դաշտերում, վորանդ առատ ջրելուց ավելորդ ջուր և մոլախոտեր են կուտակվում։ Ծխախոտի լինճը բազմանում ե կենդանի ծնունդ տալով։ Նա առան ընթացքում մի շաբաթ սերունդներ ե առաջացնում, այդ իսկ պատճառով ծխախոտի դաշտերում բազմանում ե շատ աշբաց։ Նրա վնասը կայանում ե հետեւյալում։ 1) Նախ ծծում ե ծխախոտի տերենների հյութը, տերեւ ժամանակից շուտ ե հասունանում և դիղնում ե։ Վնասված ծխախոտը կորցնում ե իր արումատը և այդպիսով նրա վորակն ընկնում ե, 2) տերենները ծածկվում են այդ միջատի մածուցիկ արտաթորանքով և տերենները չըրանալուց հետո այդ բոլորը մնում են տերեւի վրա և ծխախոտն իր վորակը կորցնում ե։

ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋՈՑՆԵՐԸ

1) Վորովհետեւ ծխախոտի լինճը բացի այն, վոր կտրող և անցնել դաշտ շիթիլի միջոցով, նա պատճում ե նաև մոլախոտերի վրա, ուստի, ինչպես ջերմոցներից, այնպես ել դաշտից, անհրաժեշտ և մոլախոտերը իսպառ վերացնել շիթիլը տեղափոխելուց առաջ

2) Անհրաժեշտ է ուշադրությամբ հետևել և շիթի-
լանոցներում նման հիվանդություն հայտնաբերելու
գեղագում, վարակված շիթին անմիջապես վոչնչացնելը
և վիճը կամ ծխախոտի փոչին ընդհանրապես ապրում
և տերեւի ստորին մտառում, վորտեղ և պետք են նրան
փնտուել:

3) Շիթիլը դաշտ տեղափոխելուց հետո գեռմատղաջ
ծխախոտի բույսերը պետք են ստուգվեն, և այն տերեւնե-
րը, վորոնք լիինով վարակված են, հարկավոր և պոկել
և դաշտից հեռացնել: Յեթե վորեն բույս արդեն բավա-
կանաչափ վարակված ե, հարկավոր և նրան ամրողջո-
վին արմատախիլ անել, ապա այրել կամ թաղել հողի
մեջ:

4) Վարակված դաշտերի համար—նախ քան տերեւվ-
ների հասունանալը, կարելի յև սրտել կանաչ սապոնի
լուծույթ, վերցնելով 1 գույլ ջրին 300 գրամ կանաչ
սապոն: Մեկ հեկտարի համար այդպիսի լուծույթ
կծախսվի 800 լիտր կամ 65—75 գույլ:

ԾԽԱԽՈՏԻ ՏԲԻՊԱՐ

Համ փոքր, հասարակ աչքով հազիվ նկատելի
միջատ ե: Ծխախոտի դաշտերի վարակումը արիպուով
կատարվում ե, յերբ նա ծխախոտի վրա անցնում և մո-
լուխութերից, բայց յերբեմն արիպուով դաշտ և տեղափոխ-
վում շիթին հետ: Հասունացած արիպու և նրա թըր-
թուաները սնվում են ծխախոտի տերեւների հյութով,
ծակելով տերեւների ջղերը և ջղերի շրջապատը Տըրո-
սով վարակված տերեւը կոչվում և «պահ» և «զեմիր-
պաս»: Այդպիսի տերեւը կորցնում ե իր գույնը և սպի-

տակ տեսք ե ընկունում, կամ պատած և լինում ժան-
նանման բծերով, կորցնում ե իր արոմատը և իհարկե-
ղան վորակը:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Վորովհետև արիպու ծխախոտի վրա անցնում ե
վոչ միայն մոլախոտերի միջոցով, այլև կուտուբական-
բույսերից, ինչպես որինակ՝ սոխի, կարտոֆիլի, պա-
միզորի վրայից, անհրաժեշտ և շիթիլանոցների և ծխա-
խոտի դաշտերի մոտերքում այդպիսի կուտուբաներ-
մշակելուց խուսափել մանավանդ հենց ծխախոտի ջեր-
մոցներում կամ ծխախոտի մարգերում: Սրանց գեն
պայքարելու միջոցները նույնն են, ինչ ծխախոտի վո-
չիւելվիծի գեմ պայքարի միջոցները Այս գեպօւմ
կանաչ սապոնի լուծույթով սրսկելը կարելի յէ կատա-
րել 2 անգամ, նայած անհրաժեշտությանը: Յերկրորդ
սրսկումը պետք է կատարել առաջինից 5—6 որ հետո:
Վորպես կանոն սրսկումը պետք ե կատարել վաղ առա-
վույցան և յերեկոյան, վորովհետև կեսորին սրսկելուց
տերեւների վրա առաջանում են այրվածքներ:

ԶԱՐԱՉԻԽԱԱ

Այս մուգ գեղնադույն փոքրիկ պարագիտ բույ-
ն, կապտամանուշակագույն ծաղիկներով: Տերեւների
փոխարեն զարագիխան իր ցողունի վրա ունի փոքրիկ
թեփիկներ: Զարագիխան ծխախոտի ցողունի մոտեր-
քում ածում ե ամրող թիթերով: Ծաղկում ե սկսած
հուլիս ամսից և չուտով մեծ քանակությամբ շատ փոքր
(16 անգամ փոքր, քան ծխախոտի սերմերը) սերմեր և

տալիս: Դրա համար ել շատ հեղտությամբ տարածվում ե քամու միջոցով: Զարադիխան սնվում ե ծխախոտի արմատների մեջ յեղած հյութով, վորից և ծխախոտը թառամում ե, իսկ յերբեմն ել բոլորովին վոչնչանում: Իսկ յեթե գրանից ծխախոտը չէ փչանում, այնուամենայնիվ նրանից խիստ պակաս ե վորակով ցածր բերք ե ստացվում: Զարադիխայի զեմ պայքարելը շատ գժվար ե, այդ պատճառով այն տեղերում, վորտեղ միքանի տարի շարունակ յերեսում ե այդ պարագիտը, նման նորամասերում պետք ե դիմել ցանքափխության: Նման դաշտերում ծխախոտ կարելի յե մշակել վոչ շուտ, քան 5—6 տարի հետո: Զարադիխան յերեալիս ծխախոտի դաշտերում, հարկավոր ե նրան վոչնչացնել, դրա համար ել այդ աշխատանքը պետք ե կատարել վորքան հնարավոր ե շուտ, ծաղկելուց առաջ, անպայման նոխ քան սերմակալելը: Զարադիխայի թփերը հարկավոր ե վոչնչացնել առանձին հոգտատրությամբ ամբողջովին: Վոչ թե բավարարվել այս կամ այն տերելը պոկելով վորովինետե պոկոտելուց նա բազմանում ե ավելի մեծ քանակությամբ և պայքարը ավելի յե դժվարանում: Արժատախիլ արված զարադիխան հարկավոր ե բոլորովին դուրս տանել ծխախոտի դաշտից և այրել: Զարադիխան յերբեմն առաջանում ե ծխախոտի դաշտերում նաև բերքահավաքից հետո, այդ գեպքում հարկավոր ե ծխախոտի բոլոր ցողունները զարադիխայի թփերով միասին հանել և այրել Յեթե կասկած կա, վոր դաշտը կարող ե վարակված լինել զարադիխայի սերմերով, այդպիսի դաշտերը ծխախոտի համար պետք ե վարել ավելի խոր, վորպեսզի զարադիխայի սերմերը թաղվեն և կանգնեցնել նրա հետագա զարգա-

ցումը: Վորովինետն բոլոր վնասատուներն սկսում են կյանք առնել մոլախոտերի վրա, ուստի մոլախոտերի գեմ մղվող պայքարը վնասատուներին վոչնչացնելու ամենակարենոր պայմաններից մեկն ե:

Հողի կուլտուրական մշակումը դանդաղեցնում է թուլացնում ե վնասատուների բազմացումը: Խորհանտեսություններում վնասատուների զեմ մղվող պայքարն անհրաժեշտ ե գնել պատշաճ բարձրության վրա: Յեթե այդ բոլորի մասին ժամանակին չմտածենք, մեր աճքողջ աշխատանքը կարող ե ապարդյուն անցնել: Վնասատուների զեմ պայքարելու տնտեսական նշանակությունը հսկայական ե, և բերքատվության չափն ու վորակը կախված ե նրանից, թե վորքան ժամանակին են միջոցներ ձեռք առնված ծխախոտը զանազան պատճառներից պաշտպանելու: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ե ժամանակին և կազմակերպված ձեռվ պայքար տանել ծխախոտի վնասատուների և նրանց հիվանդությունների զեմ ու այդպիսիք իսպառ վերցնել դաշտերից:

Համաստանի մեթյասի փորձակայտն



ՀԱՅԱՍՏԱՆԻ

20

ՀՀ ազգի Խ. Այլազյան

Հանձնվել և արտադրության 1934 թ. մայիսի 28-ին

Ստորագրված և տպագրելու 1934 թ. հունիսի 7-ին

Թույլատրված է Գլ. լիազ. Ա Ֆ 59

Հքառ. № 104, տիրաժ 1000, պատվեր № 378

ՑԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՐԱԿԻ ՏՊԱՐԱՆ, ԽԱԼԲԱՆԴՑԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0404564

15 1

ԳԻՒԸ 4 Կ.

3386



**ОБРАБОТКА ТОБАКА В ПОЛЕ
И БОРЬБА С ЕГО ВРЕДИТЕЛЬЯМИ И
БОЛЕЗНИЯМИ**

Селхозгиз

1934

Эривань